տակ ըստ մտաց նոցին լինել համարձակ յիրաւունս մեր, և ազատ 'ի բռնութենէ Ցունաց, և զրաժին տեղիս մեր 'ի տաճարին Ս. Յարութեան մեք չինեսցուք, և սուղ ինչ վիճաբանեալ 'ի վերայ այսր խնդրոյ փակեցաւ Ատեանն։

Նիստ Երկրորդ, ('ի 11 Ապրիլի)։

Ի սոյն նուագ կազմեցաւ Ատեան մեծ քան զառաջինն՝ զի յաւելան 'ի նոյն ոմանք 'ի Նախարարաց. սկիզբն խօսեցան Հայք ըստ առաջին բանից. եւ 'ի հարցանել Դատաւորաց ցՅոյնս՝ մատուցին նոքա Ատենին հանրագրութիւն ինչ բաղմակնիք 'ի դիմաց բոլոր ազգի իւրեանց, լցեալ բանիւք բարուրանաց և գանկատանաց ընդդէմ Հայոց, և ընթերցեալ զայն Ատենակալաց՝ չետուն ինչ պատասխանի։ Մատուցին Յոյնք զկարծեցեալ գիրն Օմարայ, յոր յուսացեալ էին՝ այլ չեգիտ նա ընդունելութիւն ինչ յԱտենի անդ. ազաղակ բարձին Յոյնք և ասեն՝ սա է դաշնագիրն մեծին Օմարայ՝ պարտիք կատարել որ ինչ 'ի սմա գրեալն է. Հայք ետուն պատասխանի՝ դաշնագրութիւնն լինի 'ի մէջ երկուց հաւասար տէրութեանց, իսկ հպատակի դաշնագիրն հարկատուսն է. զարմանք են որ ընդ մեծազոր Տէրութեան դաշնագիր ունիմք ասէք։ Ետուն զպատճէն Բէնչէի մարգարէին և առաջնորդին Արաբացւոց, գրեալ 'ի բարբառ նոցին՝ ընթերցան և զայն։ Հայք ասացին՝ սա ոչ վասն Երուսաղէմի է՝ զի չիք 'ի սմա անուանդ Երուսաղէմ եւ ոչ հարկաւոր 'ի վէճն յառաջակայ, այլ վասն համարձակութեան վանականացն Սինայի։ Ապա հանին ըզհրովարտակն Սուլթան Մահմուտի առաջնոյ, տուեալ 'ի թուին Հիճրէթի ١١٥٢ զոր առեալ էին 'ի դատին ընդ Շղթայակիր Պատրիարքին, զորոյ զպատճէնն ունէին Հայք, որպէս և զայլոցն, և գիտէին զգրեալսն 'ի նմա. Բէիզ Էֆէնտին առեալ զայն սկսաւ ընթեռնուլ, և մերձ 'ի վախճանն լռեաց. յառաջեաց Փոխանորդ Պօղոս վարդապետն և ասէ՝ բոլորն ընթերցցի, Բէիզն ասէ՝ ահա կատարեցաւ, կրկնեաց անդրէն Պօղոս՝ մինչ խպառ ընթերցցի, զի գոյ 'ի դմա հարկաւոր ուսանելիք. և նորա ընթերցեալ ուարտեաց, որոյ 'ի վերջին տողս գրեալէր, երեք ազգք՝ Լատինք,